



12. ՀԱՋԻ ԱՀՄԱԴ

Հեր ու տղա են ընկած, իրանք էլ շատ աղքատ: Չունքի հերը ծերացել էր, տղեն էր էթում ֆահլություն անելու ու օրական դատածը բերում էր տալի հորը. հերն էլ տանում էր պահում, տղեն չէր իմանում, թե նա որդի ա պահում:

Մի անգամ էլ նրա տղեն գնաց ղարբություն՝ փող աշխատելու. մի սաղ տարի կացավ, հարիր մանեթ դգեց ու էլի տուն էկավ: Իրա աշխատած փողը տվեց հորը, հերը նրա համար մի ձեռք շոր առավ, թագա՝ առավ, մախլաս՝ ընենց նրան ոտից-գլուխ թագացրեց, որ հենց կիմանայիր, թե եղի բղղից նոր ա գուս էկել:

Քշերվա մի վախտ, որ տանը հեր ու տղա քնել էին, նա վեր կացավ, ճրաքը վառեց ու փողն էլ վեր կալավ, գնաց դրսի բակը. էն տղեն էլ էդ սաղ քշեր չէր քնել. ղարավուլ էր քաշում, որ տենա իրա հերը փողերը որդի ա պահում: Հենց որ տեհավ, որ իրա հերը գնաց, գոմի դուռը բաց արեց՝ ներս մտավ, դուսն շեմքի քարը դիպցեց ու ներս մտավ գետնի տակը, ինքն էլ կուացավ, մտիկ արեց, տեհավ որ գետնի տակին մի մենձ օթախ ա շինած. մեջը լիքը ու-

¹ Հաշորդող բառը անընթեանելի է (Յ. Կ.):

կի, էրծաթի էն իրա տված փողերն էլ տարավ քցեց փողերի վրա ու էլի հետ դուս էկավ: Նրա տղեն էն սհաթը պուկ էլավ ու գնաց իրա տեղը մտավ, դաստաքուն տվեց: Հերը էնտեղից դուս էկավ, էլետ քարը քցեց վրեն ու գոմի գուռը հետ արեց ու գնաց արխեյին տեղը մտավ, քնեց:

Անջախ լիսացավ առավոտը. հերը գնաց բազար, տղեն մնաց տանը մենակ. ուսույով մտավ գոմը ու էն քարը դեն տարավ. առաջը մի ծակ բացվեց. ներս մտավ ու գոգը լիքը ոսկի լցրեց, ուզում էր դուրս գա՝ էն սհաթը էրկու արար, թրները հանած, էկան ասեցին.

— Հաջի Ահմադի փողը ո՛ւր ես տանում:

Նա ասաց.— Ա՛յ ախպեր, էս տունը մերն ա, էս փողն էլ մենք ենք աշխատել, էստեղ հավաքել, ի՞նչ Հաջի-Ահմադ:

Արարները ասեցին.— էս փողերը Ստամբուլցի Հաջի-Ահմադինն ա, մինչև նրանից զապխկա չբերես, չես կարող էստեղից փող տանի: Երբ որ կբերես էն վախտը ինչքան ուզում ես՝ տա՛ր: Մենք էստեղ դարավուկ ենք, որ փողը շտանեն, մեզ ի՞նչ:

Տղեն փոր-փոշման փողը ետ դարտակեց ու դուս էկավ էնտեղից, քարը քցեց բերնին ու գնաց:

Իրիկունը հերը տուն էկավ, տղեն հոր յախեն կպավ, թե էթում եմ Ստամբուլ, փող աշխատելու: Հերը դրա համար դհա ուրախ էր: Իրա ամեն բանը հազրեց ու էն բաշտեն ճամփա ընկավ Ստամբուլ: էնտեղ կացավ մի վեց-օխտն ամիս ու վաթսուն մանեթ աշխատեց:

Շատ դես-դեն ընկավ, անջախ գտավ Հաջի-Ահմադին, նրա ոտներն ընկավ ու ասեց.

— Աղա՛, թե էս բարի իրիկունը կսիրես, մի բասապխկա տուր, որ քու պահած փողերից մի գոգ տան, տանեմ իմ գլուխը պահեմ, ես էլ մեղք եմ, էնքան ֆահլություն եմ անում, ձեռս զատ չի ընկնում:

Հաջի-Ահմադը երդում-կրակն ընկավ, թե ինքը փող չունի ուրիշ տեղ, համա նա զոռում էր, որ մի բասապխկա տա:

Հաջի-Ահմադը, որ բանից խաբարություն չուներ, միամիտ առավ, մի թղթի վրա գրեց. «Ես՝ Ստամբուլցի Հաջի-Ահմադս հրամայում եմ, որ եթե ուրիշ տեղ փող ունեմ, բոլորը այս մարզին տան»:

Նա ուրախ-ուրախ էս թուղթը վեր կալավ ու շնորհակալ ըլնելով նրանից, գնաց իրա երկիրը, իրա աշխատած փողը հորը տվեց:

Մի օր, խոլվաթ քցելով, գնաց մտավ գոմ. քարը դեն քցեց ու ներս մտավ էն տունը, մի փեշ ոսկի լցրեց, ուզում էր էթա, էրկու արաբը էն սհաթը դուռ էկան ու շթողին: Նա բասպիսկեն շանց տվեց նրանց:

Նրանք ասեցին.— էս անգամ սաղ քունն ա, մենք էթում ենք:

Արարեները գնացին, փողերը մնաց էն տղին: Մի քանի վախտ անց կացավ, նրա հերը մեռավ. տղեն բերեց լավ ալվան-օթախներ շինեց էն խազինի վրա ու մեջը նստեց: Նա թաքավորի պես էր ապրում:

Պատահեց որ Օսմանլի թաքավորը Ռըսի թաքավորի հետ կռիվ բաց արեց: Ռուսը հաղթեց ու Ստամբուլ եսիր վեր կալավ, բերեց իրա երկիրը ցրվեց քաղաքները: Դու մի ասի Հաջի-Ահմադը աղքատի շորերով էդ եսիրների հետ գա էն տղի երկիրը, որ մի քիչ առաջ Ստամբուլում ֆահլութլուն էր անում:

էս տղեն մի օր տեհավ նրան, ճանաչեց. իրա մոտ ղոնաղ տարավ, լավ պատիվ տվեց, հարցրեց, թե՛ ո՞րտեղացի ես, նա ասեց՝ Ստամբուլցի:

էս տղեն նրան ասեց.— Գնա քու օղլուջաղը Ստամբուլից բեր ըստեղ, իրար հետ ախպոր նման ապրենք:

Հաջի-Ահմադը ասեց.— Ախար դու ինձ ի՞նչ ես ճանաչում, որ էսքան պատիվ ես տալի:

էն վախտը նա տարավ իրա խազինեն շանց տվեց նրան, ասեց, թե ոնց իրա տված բասպիսկով էսքան փողի տեր էլավ:

Հաջի-Ահմադը գնաց իրա տունն էլ բերեց նրա մոտ, ու իրար հետ ախպոր նման ապրում էին:

